

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ
(անգլալեզու մամուլի նյութի հիման վրա)

Անգլերեն լրագրային լեզուն որպես այդպիսին սկսել է զարգանալ 17-րդ դարում: Այդ ժամանակ լրագրերը միայն «չոր» տեղեկություն էին պարունակում՝ առանց որևէ մեկնաբանության կամ վերլուծության, քանի որ մեկնաբանումը դեմ էր լրագրության սկզբունքներին: Արդեն 19-րդ դարում լրագրային լեզուն համարվում էր յուրահատուկ տարատեսակ և բնութագրվում էր հատուկ հաղորդակցական նպատակով և լեզվական միջոցների ուրույն համակարգով:

Ժամանակակից պայմաններում լրագրային հոդվածների թարգմանությունը հատուկ նշանակություն է ձեռք բերել: Սա պայմանավորված է նրանով, որ լրագրային հոդվածները, որոնք պարունակում են հասարակաքաղաքական տեքստեր, հանդես են գալիս որպես պրոպագանդայի և գաղափարախոսական պայքարի գեմք (ի լուծմն իրենց տեղեկատվական գործառույթի): Այստեղ լինում են մեջբերումներ և՛ քաղաքական, և՛ հասարակական գործիչների ելույթներից, միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների իրապարակումներից, ինչպես նաև հեղինակային հոդվածներ միջազգային լարված իրավիճակների, ազգային ազատագրական շարժումների և այլնի վերաբերյալ (A. Mixeev, 1987):

Վերը նշված տեսակի տեքստերի բնութագրիչ հատկանիշն այն է, որ դրանք հանդես են գալիս ոչ միայն որպես բովանդակալից ամբողջություն: Այսինքն՝ այս տեքստերը ոչ միայն սոսկ տեղեկություն են հաղորդում այս կամ այն իրադարձությունների, փաստերի, խնդիրների և այլնի վերաբերյալ, այլ նաև կոչված են ստեղծելու կոնկրետ տրամադրություն, մերժելու այս կամ այն հայացքները: Այլ կերպ ասած՝ բացի իրազեկման աղբյուր լինելուց, լրագրային տեքստերը կոչված են ընթերցողի վրա ազիտացիոն-պրոպագանդական ազդեցություն թողնելու:

Լրագրերը լրատվության և համոզման միջոցներ են: Դրանք նախատեսված են զանգվածային լսարանի համար, ընդ որում՝ վերջինս միատարր չէ: Դրանք կոչված են համոզելու այդ ոչ միատարր զանգվածային լսարանին, ստիպելու նրան կարդալ: Միևնույն ժամանակ դրանցում անփոփոխ տեղե-

կատվությունը պետք է լինի այնպիսին, որ ընթերցողից նախնական պատրաստվածություն չպահանջի: Այստեղից էլ առանձնացնում ենք լրագրային լեզվի երկու միտվածություն.

1. լեզվի ժողովրդականացում,

2. լրագրային կիշենների և դրոշմների լայն կիրառում (В. Ланчиков. 1987):

Ակնհայտ է, որ նման կարգի տեքստերի թարգմանությունը հատուկ պայմաններ է պահանջում նախ և առաջ նյութի փոխանցման պլանում, որն ապահովում է ազատագրող-պրոպագանդական ազդեցությունը:

Անգլալեզու լրագրային տեքստերում լեզվի ժողովրդականացումը կատարվում է առօրյա խոսակցական ոճին պատկանող բառապաշարային միավորների կիրառմամբ: Դառնալով լրագրերի բնութագրիչ գիծ՝ առօրյա խոսակցական ոճի բառապաշարը ընթերցողի կողմից չի ընկալվում որպես լեզվական նորմի լուրջ խախտում: «Այն կարող է հանդես գալ որպես հեղինակային խոսքի լիիրավ տարր, որը ասույթը դարձնում է անբռնազբոսիկ, իսկ երբեմն էլ վերջինիս հեզմական երանգ է հաղորդում» (В. Ланчиков. 1987: 94): Բայց պետք է նշել, որ այս դեպքում ասույթի գնահատողական արժեքը (դրական կամ բացասական) չի ուժեղանում: Դիտարկենք հետևյալ օրինակը.

Despite Bush's magnanimity, the late night jokes continue. "We finally found something the president is good at", said Jay Leno. "Dodgeball" (Financial Times, Wednesday, December 21, 2008).

Զնայած Բուշի վեհանձնությանը՝ ուշ գիշերվա կատակները շարունակվում են: «Վերջապես պարզեցինք այն բանը, որից նախագահը լավ գիտի է հանում այն է՝ "խափս տալ գնդակին"» - ասել է Զեյ Լենոն:

Այն, որ հեղինակը օգտագործել է առօրյա խոսակցական ոճին պատկանող լեզվական միավոր (dodgeball), չի նշանակում, որ խախտել է լեզվական նորմը: Թարգմանությունն էլ, բնականաբար, տրվել է նույն ոճի սահմաններում:

Առօրյա խոսակցական ոճին պատկանող բառապաշարի միավորների հանդես գալը զանգվածային լրատվամիջոցների լեզվում խոսում է այն մասին, որ դրանք հանընդհանուր կերպով դառնում են ընկալելի: Եթե վերջիններիս հաճախականությունը աճում է, ապա համապատասխանաբար չեզոքանում է նրանց արտահայտչա-գնահատողական արժեքը, ինչպես ներքոհիշյալ օրինակում և դրա համապատասխան թարգմանությունում.

There would be no more dodge dossiers, said Mr. Brown - no more twisting evidence from security services to suit political ends (Daily Mail, Tuesday, June 12, 2008).

«Այլևս չէր լինի քաղաքական նպատակներ հետապնդող ոչ մի կեղծ փաստաթուղթ. ոչ մի աղավաղված վկայություն անվտանգության ծառայությունների կողմից», - ասել է պրն. Բրաունը:

Անգլալեզու լրագրային տեքստերում ասույթի հուզաարտահայտչական արժեքը կարող է դրսևորվել նաև շարահյուսական մակարդակով: Նախադասության որոշ անդամների դիրքի փոփոխությունը կարող է շեշտել ասույթի հուզական գնահատողականությունը (Վ. Мухеев, 1987):

But so terrible have many of our kings and queens been that a closer look at their misrule serves to illustrate just how blessed we are to live in a more enlightened age (Daily mail, Wednesday, July 16, 2008)

Այս նախադասության հուզաարտահայտչական արժեքը հնարավոր է հաղորդել միայն թարգմանվածքում նախադասության որոշ անդամների հետգրությամբ և այլ բառային միավորների ներմուծմամբ: Փորձենք ասվածը պարզաբանել վերոհիշյալ օրինակի հիման վրա.

Մեր թագավորներից ու թագուհիներից շատերը եղել են այն աստիճանի զարհուրելի՝ որ նրանց վատ կառավարումն ուսումնասիրելով հասկանում ենք, թե որքան բախտավոր ենք, որ տպրում ենք այս լուսավորյալ դարում:

Այստեղ բնագրի տեքստի՝ նախադասության անդամների դիրքի փոփոխությամբ արտահայտված հուզաարտահայտչական արժեքը թարգմանվածքում հաղորդվել է «աստիճան» բառի ներմուծմամբ:

Անգլալեզու լրագրային տեքստերում ընթերցողի վրա ազդեցություն գործելու հաճախ կիրառվող տարր է հարցը: Փաստացի հարցը իրենից ներկայացնում է արտասանական ուժգնության տարատեսակ: Սա ցասում, դժգոհություն արտահայտելու միջոց է (Վ. Мухеев, 1987): Եթե թարգմանիչը կուրորեն հետևի բնագրին, ապա դա կարող է անցանկալի հետևանքներ ունենալ, հատկապես այն դեպքում, երբ հարցն օգտագործվում է ասույթին բանավիճական սրություն հաղորդելու համար: Դիտերկենք հետևյալ օրինակը.

Even some independent schools are being slowly sucked into this spiral of decline. Is it any wonder that this country's administrative class can no longer run the proverbial wheelstall? (Daily Mail, Wednesday, July 2, 2008).

Նույնիսկ որոշ մասնավոր դպրոցներն էլ են կամաց-կամաց կուլ գնում հետզարգացման շղթային: Արդյոք դեռ զարմանալի՞ է, որ երկրի վարչական խավը չի կարողանում կիրառել խոսքային շարույթը:

Բերված օրինակում թարգմանությունը չունի բնագրի հուզաարտահայտչական արժեքն ու բանավիճական սրությունը: Վերջինս հնարավոր է

թարգմանվածքում հաղորդել հարցական նախադասությունը հաստատական նախադասությամբ փոխարինելով.

Եռյնիսկ որոշ մասնավոր դպրոցներն էլ են կամաց-կամաց կուլ գնում հետզարգացման շղթային: Այլևս պետք չէ զարմանլ, որ երկրի վարչական խավը չի կարողանում կիրառել խոսքային շարույթը:

Սովորաբար լրագրային տեքստերում հարցական նախադասությունների կուտակումը բարդացնում է տեքստի ընկալումը. Այդպիսի դեպքերում թարգմանությունը բավականին շահում է, եթե թարգմանիչը հանձն է առնում տեքստի մեջ կառուցվածքային փոփոխություններ մտցնել: Դիտարկենք հետևյալ օրինակը և համապատասխան թարգմանությունը

So, what is going on? Are these floods really unprecedented? And if so, can we blame global warming? Finally, does the fact that so many people have been flooded out of their homes have more to do with bad planning and the lack of a coherent housing policy than with climate change? (Daily Mail, Tuesday, July 24, 2007).

Այսպիսով, ի՞նչ է կատարվում: Այս հեղեղներն իսկապես աննախադեպ են: Եթե այո, ապա պետք է զլուրալ տաքացմա՞նը մեղադրենք: Վերջապես այն, որ հեղեղը դուրս է քշել շատերին իրենց տներից ավելի շատ կապված չէ՞ վատ պլանավորման և բնակֆոնդի շուրջ համաձայնության բացակայության հետ, քան կլիմայական փոփոխության հետ:

Հարցը այսպիսի դեպքերում արտահայտում է որոշակի դժգոհություն. զայրույթ: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ գրուցակիցը զայրացած է այն բանից, որ կառավարությունը նախադեպերից դաս չի քաղել և հետագա քայլեր չի ձեռնարկել, որպեսզի բնակչությունը ներկայումս հերթական աղետից չտուժի: Այս թարգմանությունը բավականին կշահեր, եթե հարցական նախադասությունները փոխակերպվեին հաստատական նախադասությունների (բացառությամբ առաջին նախադասության)՝ այդպիսով ընթերցողին հուսանելի դարձնելով գրուցակցի ցասումն ու անհանգստությունը.

Ասպիսով, ի՞նչ է կատարվում: Այս հեղեղներն իրականում աննախադեպ չեն Իսկ եթե եռյնիսկ ասուպես է, զլուրալ տաքացմանը չէ որ պետք է մեղադրենք: Եվ վերջապես այն, որ հեղեղը դուրս է քշել շատերին իրենց տներից, ավելի շատ կապված է վատ պլանավորման և բնակֆոնդի քաղաքականության շուրջ համաձայնության բացակայության և ոչ թե կլիմայական փոփոխության հետ:

Այսպիսով կարելի է ասել, որ անգլալեզու լրագրային տեքստերը պարունակում են փոխկապակցված բառային միավորների, քերականական միջոցների համակարգ, որը ծառայում է տեղեկության, հուզաարտահայտչա-

կան արժեքի հաղորդմանը և, հետևաբար, առանձնակի ուշադրություն է պահանջում թարգմանության ժամանակ: Ուստի կարելի է ասել, որ անգլալեզու լրագրային տեքստերի թարգմանությունը բնագրի տեքստի մեկնաբանում է, որի արդյունքում ստեղծվում է մոր կառուցվածքով մոր տեքստ: Վերջինս արտահայտում է բնագրի բովանդակությունը, հուզաարտահայտչական արժեքը, սակայն դրանք հաղորդվում են բնագրից տարբեր միջոցներով: Հետևաբար նման կարգի տեքստեր թարգմանելիս թարգմանչից ավելի «ազատ» ստեղծագործական մոտեցում է պահանջվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Крупнов В. В творческой лаборатории переводчика. Очерки по профессиональному переводу. ИЗДАТЕЛЬСТВО «МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ». Москва 1976
2. Ланчиков В. Субстандартная лексика в прессе: Проблема оценочности. Сборник научных трудов №331, МГПИИЯ, 1987
3. Михеев А. Общественно-политический перевод и современная английская риторика. Тетради переводчика. Выпуск 22, МОСКВА «ВЫСШАЯ ШКОЛА», 1987
4. Перевод как процесс и как результат: язык, культура, психология. Сборник научных трудов. Калинин 1989.
5. Тетради переводчика. Выпуск 20, под редакцией доктора филологических наук профессора Л. Бархударова, Москва «Высшая Школа», 1987